համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ինչ վերաբերում է դատական ծախս՝ փաստաբանի խելամիտ վարձատրությանը, ապա կողմերը նման պահանջ չեն ներկայացրել, հետևաբար այդ հարցը պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում, օրենքով սահմանված կարգով նշված նորմի համաձայն սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 101, 105, 109, 189, 191, 192, 198 և 362 հոդվածներով՝ դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ 15.01.2024 թվականին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Դատավոր՝ **Ալֆրեդ Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am